ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

14 դեկտեմբերի հինգշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

179
(2845)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԵԹԵ ՎԵՐԸՆՏՐՎԻ, ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՊԱԳԱՆ ՀԱՐՅԱԿԱՆԻ ՏԱԿ Է ԼԻՆԵԼՈՒ



Երեկ «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի նախագահ Արթուր Սողոմոնյանը հայտարարեց. «Եթե փոփոխություն չլինի, եւ ղեկավարությունում մնա Արմեն Մելիքբեկյանը, «Փյունիկ»-ը չի մասնակցի Հայաստանի առաջնությանը, եւ ես կհեռանամ ֆուտբոլից, քանի որ իմաստ չեմ տեսնում: Եթե Մելիքբեկյանը վերընտրվի, «Փյունիկ»-ի ոչ մի թիմ չի հայտավորվի հաջորդ մրցաշրջանի մրցումներին»: Նշենք, որ «Փյունիկ»-ն այն ֆուտբոլային ակումբն է, որը հանդես է գալիս Հայաստանի բարձրագույն խմբում: Այն Հայաստանի ամենատիտղոսակիր ակումբն է. 15 անգամ դարձել է Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության հաղթող, 8 անգամ՝ Հայաստանի գավաթակիր, եւ 9 անգամ էլ՝ սուպերգավաթակիր: Բացի սա, «Փյունիկ»-ը համարվում է առաջնային ներդրողներից մեկը Հայաստանում: Ստացվում է հետեւյալ պատկերը. իշխանության հովանավորությունը վայելող ՀՖՖ ներկայիս նախագահ Արմեն Մելիքբեկյանի՝ ՀՖՖ նախագահի պաշտոնին եւս մեկ անգամ վերարտադրվելու պարագայում հարյուրավոր աշխատատեղեր են կրճատվելու, շուրջ 1700 երեխա միայն մայրաքաղաքում մնալու է առանց ֆուտբոլային ակումբի, որտեղ մարզվում են ու հետագայում կարող են որակյալ ֆուտբոլիստներ դառնալ: Սրանից կարելի է ենթադրել, որ Մելիքբեկյանի հեռակա նպատակներից մեկն այս պարագայում հայկական ֆուտբոլի ոչ միայն ներկան, նաեւ ապագան հարցականի տակ դնելն է: Հարցի ցավոտ կողմերից մյուսը գործազրկությունն է. հարյուրավոր մարդիկ աշխատում են ֆուտբոլային ակումբում, եւ ակումբի փակվելը բերելու է նաեւ զանգվածային գործազրկության: Առաջանում է հարց՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ իր թիմակիցները տարբեր ամբիոններից բարձրագոչ հայտարարություններ են անում քաղաքացու դերի, իրավունքների պաշտպանության մասին, ի՞նչ են մտածում այս ուղղությամբ: Արդյոք իրենք հաշվարկե՞լ են, որ եթե այդ 1700 երեխան, որոնք Մելիքբեկյանի «թեթեւ ձեռքով» առանց մարզական ընտանիքի կմնան, իրենց ընտանիքի անդամների հետ համաժամանակյա բողոքի ալիք բարձրացնեն եւ համապատասխան վերաբերմունք ցույց տան Փաշինյանի եւ իր թիմի նկատմամբ, ո՞վ է տուժելու այս դեպքում: Որքանո՞վ է այս ամենը բարեխիղճ, երբ կշեռքի մի նժարին Մելիքբեկյանն է՝ իր աթոռով, մյուսին՝ 1700 երեխա ու իրենց ճակատագրերը: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց վարչապետի մամուլի խոսնակ Նազելի Բաղդասարյանին՝ պարզելու՝ ինչ քայլեր է նախատեսում ձեռնարկել Նիկոլ Փաշինյանը, որ լուրջ արդյունքներ ցուցաբերած ֆուտբոլային ակումբը չփակվի, եւ արդյոք Փաշինյանը գոհ է Մելիքբեկյանի աշխատանքից: Ապա հիշեցնելով՝ հավելել ենք, որ ոչ հեռավոր անցյալում՝ դեռեւս 2018 թվականի ապրիլի 14-ին, Նիկոլ Փաշինյանը երբ ընդդիմադիր գործիչ էր, պոտենցիալ հեղափոխական, իր քայլերթի ժամանակ հասնելով ՀՖՖ շենքի մոտ, հայտարարեց. «Ռուբեն Հայրապետյան, դու ձախողել ես հայկական ֆուտբոլի զարգացումը, հեռացի՛ր՝ քո խոստմանը համաձայն: Ես ավելի լավ ֆուտբոլ եմ խաղում, քան Ռուբեն Հայրապետյանի ստեղծած ֆուտբոլի հավաքականը»: Ընդգծենք, որ այդ ժամանակ հավաքականների դասակարգման աղյուսակում Հայաստանը 90-րդն էր, այժմ՝ 95-ն է, այսինքն՝ մեր հավաքականը 5 հորիզոնականով նահանջ է գրանցել հենց Մելիքբեկյանի պաշտոնավարման տարիներին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

Վերջին շրջանում քաղաքական դաշտում ակտիվորեն նոր թեզ է շրջանառվում, որ Նիկոլ Փաշինյանը Արցախի վերջնական հանձնումից հետո ստեղծված այս լարվածությունը թոթափելու նոր տարբերակ է մտածել՝ գնալ արտահերթ ընտրությունների: Այսպիսով, Նիկոլ Փաշինյանը որոշել է միանգամից մի քանի հարց լուծել. նախ՝ չնայած առկա մեծ դժգոհություններին՝ նա եւս մեկ անգամ կլեգիտիմացնի, կերկարաձգի իր իշխանությունը, ինչպես նաեւ խորհրդարան կբերի ՔՊ-ի սատելիտ քաղաքական ուժերին, ինչպես, օրինակ, «Հանրապետություն», ԼՀԿ, որոնք ավելորդ խոչընդոտներ չեն ստեղծի իր համար: Նիկոլ Փաշինյանի՝ արտահերթ ընտրությունների գնալու մտադրությունը հաստատում է նաեւ այն, որ վերջին շրջանում նա հաճախակի է հանդիպում կուսակցության վարչության, ինչպես նաեւ մարզային ակտիվի հետ, որպեսզի, նախ, տրամադրություններ ստուգի, բացի սա, քննարկի արտահերթ ընտրությունների գնալու հարցը: Ավելին՝ ՔՊ-ն արտահերթ ընտրությունների գնալուց առաջ որոշել է ամրապնդել իր դիրքերը՝ ազատվելով ընդդիմադիր համայնքապետերից, որոնք կարող են հետագայում խոչընդոտ հանդիսանալ իրենց համար: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ վարչության անդամ Ռոմանոս Պետրոսյանից հետաքրքրվել է՝ արդյոք կուսակցությունում քննարկում կա արտահերթ ընտրությունների մասով. «ՔՊ-ն արտահերթ ընտրությունների այս պահին չի պատրաստվում, մենք պարզապես ինստիտուցիոնալ կուսակցաշինության գործընթաց ենք սկսել: Վարչության նախագահն էլ վարչության անդամների հետ պարբերաբար այցելում են մարզեր, տարբեր ձեւաչափերով շփումներ են ունենում տարածքային խորհուրդների, կառույցների եւ կուսակցականների հետ: Դրանով եւ՛ գաղափարաբանական հարցեր ենք շոշափում, եւ՛ ուղիղ կապ ենք պահպանում վարչության եւ կուսակցականների միջեւ, ինչպես նաեւ կուսակցաշինության գործընթացի շրջանակներում գաղափարական արժեհամակարգային բաղադրիչն ենք ամրացնում մեր կուսակցությունում: Արտահերթ ընտրությունների գնալու հարց չի քննարկվում»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկացմամբ՝ համացանցում նախորդ տարի՝ Ամանորի շեմին, տարածվել էր մի լուսանկար, որտեղ պատկերված էր դաշնակցական Իշխան Սաղաթելյանը, որն ընտանիքի հետ մեկնում էր Դուբայ՝ Նոր տարին դիմավորելու: Մեծ աղմուկ բարձրացրած այս լուսանկարի պատմությունն այդպես էլ չբացահայտվեց. ինչպե՞ս էր «Զվարթնոց» օդանավակայանի անվտանգության տեսախցիկների նկարածը հայտնվել ՔՊ-ամերձ կայքերում: Մինչ օրս ոչ ոք չի ենթարկվել պատասխանատվության, իսկ Քաղավիացիայի կոմիտեն ոչ մի պաշտոնական հայտարարություն չարեց: Այժմ, վերհիշելով եղածը, «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց «Զվարթնոց» օդանավակայան՝ հասկանալու համար՝ արդյոք որեւէ գործընթաց եղել է, թե հիմա էլ, ինչպես այդ ժամանակ, հեշտ է օդանավակայանի տեսախցիկների արտահոսք ապահովել: «Ինչպես արդեն պատասխանել ենք Ձեր լրատվամիջոցի նախորդ հարցմանը, Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական ավիացիայի ավիացիոն անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն. առաջարկում ենք դիմել ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտե»: Մենք էլի կդիմենք...

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ կառավարությունում այս օրերին լարված ու սպասողական իրավիճակ է: Բանն այն է, որ տարեվերջին բոլոր նախարարությունները պետք է ամփոփեն իրենց՝ այս տարվա գործունեությունը, Նիկոլ Փաշինյանն էլ պետք է հերթով այցելի նախարարություններ, որպեսզի նախարարները հաշվետվություն ներկայացնեն նրան իրենց կատարած աշխատանքի, արած-չարածի վերաբերյալ: Ինչպես գործադիրի մեր աղբյուրներն են փոխանցում, նախարարներն այս առիթով իրար են խառնվել ու շտկումներ են անում, բացթողումներն են լրացնում, թղթաբանության հետ կապված հարցերն են լուծում, որպեսզի Փաշինյանին «ստուգարքը» պատշաճ հանձնեն եւ հանկարծ գալիք տարում իրենց պաշտոններին հրաժեշտ չտան:

ԶՐՈՒՅՑ

ՔՊ-Ն ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆԻ՞

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության անդամ, Պետական վերահսկողական ծառայության ղեկավար Ռոմանոս Պետրոսյանն է:

-Պարոն Պետրոսյան, մենք գրել էինք, որ ժամանակին ՔՊ-ի եւ «Բալասանյան դաշինք»-ի միջեւ համագործակցության հուշագիր կնքելու եւ համատեղ իշխանություն ձեւավորելու գործընթացը Դուք եք համակարգել, Դուք եք բանակցությունները վարել ու պայմանավորվածություն ձեռք բերել, որ դաշինքը կայանա: Ընդամենը օրեր առաջ այդ դաշինքը լուծարվեց, ինչո՞ւ:

-Բանակցությունները վարել է մեր կուսակցության վարչության նախորդ նախագահը՝ Սուրեն Պապիկյանը: «Բալասանյան դաշինք»-ի հետ մեր քաղաքական համագործակցության պաշտոնապես մեծ մասը տրվել է հենց այդ բանակցությունների հիման վրա՝ երկուստեք արված հայտարարությունների եւ հուշագրի ստորագրմամբ: Ես բանակցություններ չեմ վարել:

-Տպավորություն է, որ ՔՊ-ն որոշել է ազատվել բոլոր ընդդիմադիր համայնքապետերից, որոնք ՔՊ անդամ չեն. ինչպես Ալավերդիում եղավ վերջերս, հիմա նույնը որոշել եք կրկնել Գյումրիում, հաջորդը Գորիսն է: Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ հենց Նիկոլ Փաշինյանն է այդ որոշումը կայացրել, որ պետք է հնարավորինս սեղմ ժամկետում բոլոր ընդդիմադիր համայնքապետերին հեռացնել եւ բոլոր համայնքներում իշխանություն վերցնել:

-Բնավ այդպիսի որոշում չկա, ես սա պաշտոնապես եմ ասում: Ալավերդիում լրիվ այլ իրավիճակ է, Գյումրիում՝ տրամագծորեն այլ: Եթե Ալավերդիում պարզապես ավագանու մանդատ ստացած գործիչները վերախմբավորվեցին եւ արդյունքում ընտրեցին ՔՊ-ի ներկայացուցչին՝ որպես համայնքի ղեկավար, ապա Գյումրիում, ընդհակառակը, հուշագրով համատեղ կառավարում ստանձնած ձեւաչափից ՔՊ-ն հրաժարվեց եւ անցավ դասական ընդդիմադիր դաշտ եւ ընդդիմադիրի մանդատով է շարունակելու իր գործունեությունը Գյումրիում: Այսինքն՝ այդ համայնքներում տրամագծորեն այլ գործընթացներ են տեղի ունեցել, բայց երկուսն էլ քաղաքական առողջ գործընթացներ են. դա այլակարծության, ժողովրդավարության գործիքակազմեր են, որոնք կիրառել է ՔՊ-ն: Գյումրու ավագանու մեր ֆրակցիայի ղեկավարը՝ Քնարիկ Հարությունյանը, եւ երկու փոխքաղաքապետերը՝ ՔՊ մանդատով նշանակված եւ հրաժարական ներկայացրած, մամուլի ասուլիսով են հանդես եկել եւ սպառիչ պատասխաններ են տվել: Ինչ վերաբերում է նրան, որ վարչապետը հրահանգ է տվել ազատվել ընդդիմադիր համայնքապետերից, հստակ ասում եմ՝ չկա նման բան, վարչության նախագահը՝ նույն ինքը վարչապետը, նման խնդիր չի դրել. դա դեմ է մեր քաղաքականությանը եւ ժողովրդավարության սկզբունքներին:

-Պարոն Պետրոսյան, վերջին շրջանում ակտիվ տեղեկություններ են շրջանառվում, որ ՔՊ-ն արտահերթ ընտրությունների է պատրաստվում, եւ սա է պատճառը, որ որոշել եք ազատվել ընդդիմադիր համայնքապետերից, որպեսզի հետո խնդիրներ չունենաք, ավելին՝ հենց սրա համար էլ վերջին շրջանում կուսակցությունը պարբերաբար փակ հանդիպումներ է ունենում թե՛ վարչության կազմով, թե՛ մարզային ակտիվի հետ:

-ՔՊ-ն արտահերթ ընտրությունների այս պահին չի պատրաստվում. մենք պարզապես ինստիտուցիոնալ կուսակցաշինության գործընթաց ենք սկսել: Վարչության նախագահն էլ վարչության անդամների հետ պարբերաբար այցելում են մարզեր, տարբեր ձեւաչափերով շփումներ են ունենում տարածքային խորհուրդների, կառույցների եւ կուսակցականների հետ: Դրանով եւ՛ գաղափարաբանական հարցեր ենք շոշափում, եւ՛ ուղիղ կապ ենք պահպանում վարչության եւ կուսակցականների միջեւ, ինչպես նաեւ կուսակցաշինության գործընթացի շրջանակներում գաղափարական արժեհամակարգային բաղադրիչն ենք ամրացնում մեր կուսակցությունում: Այս մասին վարչության նախագահը նաեւ Իջեւանում կայացած վերջին մարզային հանդիպմանն ասել է՝ ոմանք ասում են, թե սա արտահերթ ընտրությունների գնալու քայլ է, բայց նման բան չկա:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԻՐԱՎԱՐՁԱՅԻՆ

ԳԵՐԻՆԵՐԸ՝ ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ

«Այս պահին Ադրբեջանում շարունակվում է մնալ եւս 23 ռազմագերի, որից 5-ը քաղաքացիական անձինք են, 10-ը՝ ռազմագերի, իսկ 8-ը՝ քաղբանտարկյալներ: Վերջիններս էլ հանդիսանում են Արցախի Հանրապետության նախկին պետական այրեր»,-«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասել է միջազգային իրավունքի մասնագետ, փաստաբան Սիրանուշ Սահակյանը:

Ըստ մասնագետի՝ Ադրբեջանն այս քայլին է գնացել հիմնականում այն պատճառով, որովհետեւ Բաքվում պահվում են նաեւ Արցախի Հանրապետության նախկին պետական այրերը, որոնք մեծ կարեւորություն ունեն հակառակ կողմի համար: Նա նաեւ նշեց, որ նրանց մեղադրանք է առաջադրվել «սահմանի ապօրինի հատման, ահաբեկչության, ապօրինի զինամթերքի ձեռք բերման ու տեղափոխման եւ խոշտանգման համար» (չակերտները հեղինակային են):

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Սահակյանը նաեւ նշել է, որ այս վերջին քաղաքական գործոնների զարգացման ֆոնին հնարավոր է նաեւ հունվարին ռազմագերիների եւ քաղաքացիական գերիների հայրենադարձում լինի:

«Նույնը ասել չեմ կարող 8 քաղբանտարկյալների վերաբերյալ, որոնց, ենթադրում եմ, Ադրբեջանը երկար կպահի Բաքվում, քանի որ նրանց սպասվում է «բեմական» դատավարություն, եւ նրանց Բաքվում մնալը բխում է որոշ կարեւոր քաղաքական գործոններից»,- նշել է Սիրանուշ Սահակյանը:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԷՍՏՈՆԻԱՆ

Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը հանդիպել է Էստոնիայի իր գործընկեր Մարգուս Ցահքնայի հետ: Վերջինս X-ի իր միկրոբլոգում գրել է. «Հանդիպեցի ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի հետ: Ես ընդգծեցի, որ Էստոնիան պարտք ունի Հայաստանին, քանի որ չենք ճանաչել հայ ժողովրդի ցեղասպանությունը, եւ ես այդ գործընթացը կսկսեմ Էստոնիայի խորհրդարանում»:

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄՆԵՐ

Armlur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Գորիսի ոստիկանապետին եւ Կապանի ծառայության գծով փոխոստիկանապետին ձերբակալել ու Երեւան են տեղափոխել Սյունիքի մարզում անտառներից ապօրինի մասսայական ծառահատումների քրեական վարույթի շրջանակներում: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ապօրինի ծառահատումների «տանիքը» իրավապահ համակարգի բարձրաստիճան պաշտոնյաներ են: Ի դեպ, ՀՀ ոստիկանության պաշտոնյաների հետ ձերբակալվել են նաեւ մոտ 10 անձինք: SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ երեկ՝ դեկտեմբերի 12-ին, Հակակոռուպցիոն կոմիտեն օպերատիվ միջոցառում է իրականացրել Սյունիքի մարզում, ձերբակալել եւ Երեւան են տեղափոխել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Գորիսի բաժնի պետ Մուշեղ Գեւորգյանին եւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կապանի բաժնի պետի ծառայության գծով տեղակալ Վաղարշակ Գինոսյանին:

ԿՄՆԱՆ ԲԱՔՎՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը դեկտեմբերի 13-ին ընդունել է Հայաստանում Կանադայի արտակարգ եւ լիազոր դեսպան Էնդրյու Թըրներին:

Շնորհավորելով դեսպանին պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ՝ Ալեն Սիմոնյանը համոզմունք է հայտնել, որ Հայաստանում Կանադայի դեսպանության բացումը եւ Էնդրյու Թըրների նշանակումը՝ որպես առաջին ռեզիդենտ դեսպան, նոր խթան կհանդիսանան երկու երկրների հարաբերությունների զարգացման գործում:

Անդրադառնալով տարածաշրջանային մարտահրավերներին՝ ՀՀ ԱԺ նախագահն ընդգծել է. «Մենք հասկանում ենք, որ մեր անվտանգության առանցքային համակարգը ժողովրդավարությունն է: Լիահույս ենք, որ միջազգային գործընկերները կաջակցեն ժողովրդավար Հայաստանին տարածաշրջանում երկարատեւ խաղաղություն հաստատելու գործում»:

Այս համատեքստում խորհրդարանի ղեկավարը դեսպանին ներկայացրել է Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի կնքման գործընթացը, անդրադարձել Ադրբեջանում գտնվող գերիների անհապաղ վերադարձին: Ալեն Սիմոնյանի խոսքով՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գերիների փոխանակման շուրջ պայմանավորվածության իրականացումից հետո անգամ այդ երկրում դեռեւս հայ գերիներ կմնան:

Դեսպանը հետագա համագործակցության պատրաստակամություն է հայտնել, նշել, որ Կանադան աջակցում է Հայաստանի տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանը եւ ժողովրդավարությանը:

Նրա խոսքով՝ Կանադայի արտգործնախարարի այցը Հայաստան եւ դեսպանության բացումը Հայաստանի ժողովրդավարությանն աջակցելու եւս մեկ ապացույց են:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԳԵՐԻՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտնել է, որ 2020-2023թթ. գերեվարված ՀՀ 31 զինծառայողներ եւ սեպտեմբերին ԼՂ-ում գերեվարված 1 զինծառայող հատել են Ադրբեջան-Հայաստան սահմանը եւ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում: Նրանք նախ կանցնեն նախնական բժշկական զննություն եւ կվերադառնան իրենց հարազատների մոտ: Մեր վերադարձած եղբայրների անվանացանկը հետեւյալն է՝

1. Ավագյան Հրաչ Արզումանի- Շիրակ, Գյումրի
2. Ավագյան Սերոբ Սուրենի - Շիրակ, Ջույգաղբյուր
3. Ավագյան Տիգրան Մանուկի - Շիրակ, Գյումրի
4. Ավետիսյան Վաղարշակ Աշոտի - Շիրակ, Ջույգաղբյուր
5. Արամյան Կարեն Արմենի - Շիրակ, Աշոցք
6. Բահրիկյան Վահագն Էդիկի - Շիրակ, Ախուրյան
7. Բաղդասարյան Արթուր Էդուարդի - Շիրակ, Գյումրի
8. Գեւորգյան Ռոբերտ Հովիկի - Շիրակ, Ախուրյան
9. Դիլանյան Արման Վազգենի - Շիրակ, Ջույգաղբյուր
10. Եղիազարյան Սասուն Սեյրանի - Շիրակ, Անի
11. Թադեւոսյան Հրայր Վարդանի - Շիրակ, Աշոցք
12. Թոսունյան Լեւոն Աշոտի - Շիրակ, Աշոցք
13. Իսանյան Արեն Արայի - Ստեփանակերտ
14. Կիրակոսյան Էդուարդ Արմենի - Շիրակ, Գյումրի
15. Կոստանյան Նարեկ Աղասու - Շիրակ, Արթիկ
16. Հակոբյան Վոլոդյա Գագիկի - Շիրակ, Սառնաղբյուր
17. Հարությունյան Վարազդատ Սերյոժայի - Շիրակ, Ախուրյան
18. Հերաբյան Հրայր Հրաչի - Շիրակ, Աշոցք
19. Հովագիմյան Հարություն Յուրիկի - Սյունիք, Կապան
20. Հովհաննիսյան Հայկազ Կորյունի - Շիրակ, Ախուրյան
21. Ղազարյան Կարեն Աշոտի - Տավուշ, Դիլիջան
22. Մարտոյան Մանուկ Հովհաննեսի - Շիրակ, Լանջիկ
23. Մարտիրոսյան Գեւորգ Սամվելի - Շիրակ, Գյումրի
24. Միքայելյան Անդրանիկ Վազգենի - Շիրակ, Գյումրի
25. Ոսկանյան Գագիկ Աշոտի - Երեւան
26. Ռաֆաելյան Վլադիմիր Օթարիի - Արմավիր, Վաղարշապատ
27. Սաղաթելյան Գրիգոր Սեյրանի - Շիրակ, Աշոցք
28. Սարգսյան Իշխան Աշոտի - Երեւան
29. Սերոբյան Գեղամ Սամվելի - Շիրակ, Ջույգաղբյուր
30. Սուքիասյան Անդրանիկ Սրապի - Շիրակ, Գյումրի
31. Ստեփանյան Դավիթ Ստեփանի - Շիրակ, Փանիկ
32. Վարդանյան Արսեն Արայիկի - Շիրակ, Անի:

ՀԱՅՏՆԵՑ

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՋԸ ՓԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հարավային Կովկասում ուժի կիրառման, հակամարտությունների էջը փակելու եւ արժանապատիվ խաղաղություն հաստատելու համար անհրաժեշտ է բոլոր հարեւան երկրների հստակ հանձնառությունը եւ միջազգային գործընկերների ամուր, անկեղծ աջակցությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարեց ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Էստոնիայի արտաքին գործերի նախարար Մարգուս Ցահքնայի հետ համատեղ ասուլիսի ժամանակ:

«Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի եւ իմ վերջին հանդիպումը կայացել է սեպտեմբերի 18-ին Նյու-Յորքում ՄԱԿ գլխավոր ասամբլեայի 78-րդ նստաշրջանի ընթացքում՝ չհաշված երկու օր առաջ կարճատեւ զրույցը Բրյուսելում: Ընդամենը երեք ամիս է անցել այդ հանդիպումից, սակայն տարածաշրջանում տեղի են ունեցել էական զարգացումներ: Եթե սեպտեմբերին քննարկում էինք Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների, անվտանգության հարցերը, Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակման վերացման հարցերը, ապա մեր հանդիպման հաջորդ իսկ օրը տեղի ունեցած իրադարձությունները՝ Ադրբեջանի հարձակումները Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ, էապես փոխեց պատկերը տարածաշրջանում: Այսօր Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտման հետեւանքով գրեթե հայ չի մնացել, եւ ավելի քան 100 հազար Լեռնային Ղարաբաղի հայեր փախստական են դարձել ու ապաստան են գտել Հայաստանի Հանրապետությունում»,- ասաց Միրզոյանը:

Նրա խոսքով՝ կառավարությունը գործուն ջանքեր է գործադրում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի առաջնային կարիքները հոգալու համար:

«Այստեղ եւս ուզում եմ շնորհակալություն հայտնել Էստոնիայի կառավարությանը փախստականների առաջնային անհրաժեշտության կարիքները հոգալու հարցում մեզ ցուցաբերած աջակցության համար: Շատ խորհրդանշական է Էստոնիայի փախստականների խորհրդի կողմից երեւանյան գրասենյակի հիմնումը, որը պաշտոնապես այսօր կբացվի: Գնահատում ենք նաեւ տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն հաստատելու ուղղությամբ մեր ջանքերին աջակցող Էստոնիայի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչների հայտարարությունները»,- ընդգծեց Միրզոյանը:

Խոսելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակի մասին՝ Միրզոյանը նշեց, որ այժմ Հարավային Կովկասում ուժի կիրառման, հակամարտությունների էջը փակելու եւ արժանապատիվ խաղաղություն հաստատելու համար անհրաժեշտ է բոլոր հարեւան երկրների հստակ հանձնառությունը եւ միջազգային գործընկերների ամուր, անկեղծ աջակցությունը:

«Կան, անշուշտ, մարտահրավերներ, կա բարդ պատմություն, բայց խաղաղության գործընթացում առաջ շարժվել հնարավոր է, եթե Ադրբեջանը եւս աներկբայորեն իր հավատարմությունը ցույց տա խաղաղության գործընթացին եւ հանրահռչակված սկզբունքներին, հստակ սահմանների փոխադարձ ճանաչմանը, տարածքային ամբողջականության ճանաչմանը՝ առանց երկիմաստությունների, ինչպես նաեւ հայտնի սկզբունքների հիման վրա տարածաշրջանային, տրանսպորտային ենթակառուցվածքների ապաշրջափակմանը եւ վերագործարկմանը: Այս առումով մենք կարեւոր ենք համարում նաեւ «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը, որով հանդես է եկել Հայաստանը»,- ասաց Միրզոյանը:

Հավելենք, որ ԱԳ նախարարը հիշեցրեց, որ վերը թվարկված սկզբունքները հավանության են արժանացել Գրանադայում քառակողմ հանդիպմանը ողջ միջազգային հանրության կողմից, եւ դրանք նույն այն սկզբունքներն են, որոնք արտացոլված են նաեւ ավելի վաղ՝ հուլիսին, ԵՄ խորհրդի նախագահ Շառլ Միշելի հայտարարության մեջ, որը նա արել է ՀՀ վարչապետի, Ադրբեջանի նախագահի եւ իր եռակողմ հանդիպման արդյունքներով:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԻՍՏ ԿՀՐԱՎԻՐԵՆ

Երկուշաբթի օրը՝ դեկտեմբերի 11-ին, խորհրդարանն ավարտեց իր հերթական նիստը, իսկ երեկ ԱԺ արտահերթ նիստ էր հրավիրել, որի ընթացքում երեք օրենքի նախագիծ ընդունեց, այդ թվում՝ ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանի հեղինակած աղմկահարույց նախագիծը, որը հնարավորություն է տալիս 27 տարին լրացած, սակայն պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին ազատվել գործող օրենսդրությամբ սահմանված քրեական պատասխանատվությունից:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ պատգամավորներից տեղեկացավ, որ մինչեւ տարեվերջ խորհրդարանը եւս մեկ արտահերթ նիստ կգումարի, քանի որ օրենքի նախագծեր կան, որոնք դեռ պետք է քննարկվեն:

ԼՔՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Վերջին մարդահամարի տվյալներով՝ Հայաստանի բնակչությունը կազմում է 2 մլն 963,3 հազար մարդ: Ստորեւ ներկայացնում ենք 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը՝ ըստ սեռի եւ տարիքի: Ըստ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ ՀՀ մշտական բնակվողները 30-35 տարեկան կանայք եւ տղամարդիկ են:

45-50 տարեկան կանայք եւ տղամարդիկ լքում են Հայաստանը՝ ըստ երեւույթին, կապված արտագնա աշխատանքի հետ: Սա կարող է կապված լինել նաեւ մահացությունների թվաքանակի հետ, սակայն նման հստակ վիճակագրական տվյալ չկա:

Հայաստանի բնակչության 80-ից բարձր տարիքային շեմ ունեցող կանանց թիվը կազմում է 3.7 %, իսկ 80-ից բարձր տղամարդկանց թիվը՝ 2.3 %:

ՀԱՅՏՆՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Սուրեն Աղասու Էլոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով պահեստազորի առաջին խմբի առաջին կարգում հաշվառված շարքային կազմի պահեստազորային, կոչումով շարքային, պարտավոր լինելով մասնակցել 2023 թվականի հոկտեմբերի 03-ից մինչեւ հոկտեմբերի 27-ն անցկացվող վարժական հավաքներին, Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման Տաշիրի բաժանմունքի կորմից պատշաճ ծանուցված լինելով տարածքային ստորաբաժանում ներկայանալու մասին, չի ներկայացել եւ չի մեկնել վարժական հավաքի:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԲԱԿԵՐԻՑ ՄԵԿՈՒՄ

2023թ. դեկտեմբերի 10-ին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ից հաղորդում է ստացվել այն մասին, որ Երեւան քաղաքի Շողրոն փողոցի հասցեներից մեկից իրենց մոտ կտրած-ծակած վերֆերով բուժօգնության են տեղափոխվել երկու երիտասարդներ, որոնցից մեկը՝ 26 տարեկան Դ. Սայադյանը, ժամը 20:32-ին մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորքի վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասով եւ ՀՀ քրեական օրեսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հատկանիշներով:

Քրեական վարույթի շրջանակներում կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել են արնանման հետքեր, առգրավվել են տուժողների հագուստները, նշանակվել են փորձաքննություններ: Պարզվել է դեպքի բոլոր մասնակիցների ինքնությունը:

Ձեռնարկված քննչական գործողությունների, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տեղեկություններ են ստացվել այն մասին, որ նախկինում ծագած գումարային հարցերի շուրջ առաջացած վիճաբանությունը դեկտեմբերի 10-ին՝ ժամը 20:00-ի սահմաններում, շարունակվել է Երեւան քաղաքի Շոպրոնի փողոցի շենքերից մեկի բակում, որին մի կողմից մասնակցել են Երեւանի 29-ամյա բնակիչն ու նրա եղբայրը, մյուս կողմից՝ մի խումբ անձինք: Վիճաբանությունը վերածվել է փոխադարձ հարվածների, որի ընթացքում 29-ամյա Գ. Հ.-ն իր մոտ գտնվող սուր կտրող-ծակող առարկայով կյանքից զրկելու դիտավորությամբ հարվածներ է հասցրել Երեւանի 27-ամյա եւ Տավուշի մարզի 26-ամյա բնակիչներին, որոնցից առաջինը ստացել է, նախնական տվյալներով, միջին ծանրության, իսկ երկրորդը՝ Դ. Սայադյանը՝ կյանքի հետ անհամատեղելի վնասվածք:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ քննիչի կողմից միջնորդություն է ներկայացվել հսկող դատախազին 29-ամյա տղամարդու նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին եւ 167-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետի հատկանիշներով քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ, որը բավարարվել է:

Ոստիկանությանը տրվել է հանձնարարություն՝ դատարան ներկայացնելու նպատակով նշված անձին ձերբակալելու վերաբերյալ, եւ Գ.Հ.-ն դեկտեմբերի 12-ին ձերբակալվել է:

Միջնորդություն է ներկայացվում դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են վարութային եւ ապացուցողական, ինչպես նաեւ օպերատիվ-հետախուզական անհրաժեշտ գործողությունները դեպքի բոլոր հանգամանքները համակողմանի պարզելու, միջադեպի մասնակիցներից յուրաքանչյուրի արարքներն անհատականացնելու եւ իրավական գնահատականների արժանացնելու համար:

ԱՆԿԱՐԳՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՁԵԼ ԵՆ ՓԱԽՉԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Երեւանում անկարգություններ հրահրած ՌԴ քաղաքացին առերես հարցաքննությունից հետո քննչական բաժնի զուգարանի պատուհանից փախուստի փորձ է կատարել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկացմամբ՝ այս մասին հայտարարություն է տարածել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն:

«Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում քննվող քրեական վարույթով իրականացվող նախաքննության շրջանակներում 2023 թվականի դեկտեմբերի 12-ին ձերբակալված անձի եւ նույն քրեական վարույթով տուժող ՌԴ քաղաքացի Յու. Մաքսիմովսկայայի միջեւ տեղի է ունեցել առերես հարցաքննություն, որի ավարտից հետո՝ ժամը 21:30-ի սահմաններում, Յու. Մաքսիմովսկայան խնդրել է գնալ զուգարան: Վերջինիս քննիչը ուղեկցել է քննչական բաժնի՝ աղջիկների համար նախատեսված զուգարան եւ սպասել դռան դիմաց:

Մտնելով ներս՝ Յ. Մաքսիմովսկայան զուգարանում առկա փոքր պատուհանից փորձել է դիմել փախուստի եւ ընկել ՀՀ ՆԳՆ ոստիկանության՝ ձերբակալված անձանց պահելու վայրի զբոսանքի համար նախատեսված հատվածում առկա ցանցե տանիքին՝ ստանալով մարմնական վնասվածք: Յու. Մաքսիմովսկայան տեղափոխվել է Էրեբունի բժշկական կենտրոն:

Համաձայն բժշկական հաստատությունից ստացված տեղեկանքի՝ վերջինիս մոտ ախտորոշվել է L2 եւ L3 ողերի մարմինների կոմպրեսիոն կոտրվածք»,- ասված է ՔԿ-ի տարածած հաղորդագրության մեջ:

Դեպքի առթիվ 2023 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-506-րդ հոդվածի 1-ին մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կատարվել է դեպքի վայրի զննություն:

Հիշեցնենք, որ ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական առաջին բաժնի վարույթում քննվող քրեական վարույթով, որը նախաձեռնվել էր դեկտեմբերի 8-ին՝ ժամը 22:00-23:30-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքի կենտրոնում՝ Թումանյան եւ Մաշտոց փողոցներում ՌԴ երկու քաղաքացիների կողմից առերեւույթ խուլիգանական արարքներ կատարելու դեպքի առթիվ, Յու. Մաքսիմովսկայան ունի մեղադրյալի կարգավիճակ. նրա նկատմամբ որպես խափանման միջոց էր ընտրվել կալանքը:

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ

ԼՔԵԼ ԵՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Այդքան քննարկված եւ պահանջված դատական վեթինգի շրջանակներում տեղի են ունեցել դատավորների հսկայածավալ ազատումներ եւ նշանակումներ: Այսպես, ներկայումս պաշտոնավարող 309 դատավորներից 200-ը նշանակվել են 2018 թվականի հեղափոխությունից հետո:

«Վեթինգ»-ը ոչ այլ ինչ է, քան դատավորների բարեվարքության ստուգում եւ դատավորների կազմի նորացում: Վերջին տարիներին նոր նշանակված, ինչպես նաեւ առաջխաղացում ունեցած դատավորները, որոնք կազմում են գործող դատավորների շուրջ 60 տոկոսից ավելին, անցնել են բարեվարքության ստուգում: Բնականոն սերնդափոխության եւ զտման շրջանակներում 2018-2022 տարբեր հիմքերով դատական համակարգը լքել է 64 դատավոր, եւս 33 դատավոր հրաժեշտ է տվել պաշտոնին միայն 2023 թվականին:

Մեկ այլ կարեւոր վիճակագրություն. հեղափոխությունից հետո կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքով դադարեցվել է 30 դատավորի լիազորություն, որից 8-ը դադարեցվել է վերջին մեկ տարվա ընթացքում:

ԲԱՆԱԿԻՑ ԱԶԱՏԵԼ Է

Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի Լերմոնտովի փողոց 3-րդ նրբ. 14-րդ տան բնակիչ Հրաչյա Ժորայի Սրապյանը, տեղեկանալով Համլետ Անդրանիկի Գասպարյանի կողմից որոշակի գումար կաշառք տալու պայմանով զորակոչային տարիքի հասած անձանց զինծառայությունից ապօրինի ազատելու մասին, 2019թ. մայիս ամսին հանդիպել է Համլետ Գասպարյանին վերջինիս պատկանող Արմավիր քաղաքի խանութում եւ նրան հայտնել որդու՝ Սամվել Հրաչյայի Սրապյանին ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու ցանկության մասին:

Համլետ Գասպարյանը, ստանալով իր առաջարկը, վերջինիս հայտնել է, որ որդու օգտին իբր որոշակի գործողություններ կատարելու համար իրավասու պաշտոնատար անձանց հարկավոր է որպես կաշառք տալ ընդհանուր 2,800,000 ՀՀ դրամ, ինչի կապակցությամբ Հրաչյա Սրապյանը տվել է իր համաձայնությունը եւ նույն օրը հիշյալ գումարից որպես կաշառք մաս-մաս փոխանցել է 1.200.000 ՀՀ դրամ գումար Համլետ Գասպարյանին վերջինիս պատկանող Արմավիր քաղաքում գտնվող թունաքիմիկատների վաճառքի խանութում, իսկ շուրջ 10-15 օր անց տեղի ունեցած հանդիպման ընթացքում, որպես կաշառք, նույն վայրում նրան է փոխանցել նաեւ մնացած 1.600.000 ՀՀ դրամ գումարը:

Համլետ Գասպարյանը որեւէ պաշտոնատար անձի չի փոխանցել եւ խարդախությամբ, ուղղակի դիտավորությամբ, խաբեության եղանակով հափշտակել է իրեն փոխանցված է 2,800,000 ՀՀ դրամ գումարը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ դեկտեմբերի 12-ից 13-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 55 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԴԱՏԸ ՁԳՁԳՎՈՒՄ Է

2019թ. հուլիսին Քննչական կոմիտեն հայտարարություն տարածեց, որ 2019 թ. հուլիսի 17-ին մի խումբ անձինք ապօրինի ծառահատումների դեմ պայքարի խստացման հետ կապված իրենց դժգոհություններն արտահայտելու նպատակով փակել են միջպետական ճանապարհի Իջեւան քաղաքի Երեւանյան ու Իջեւանյան փողոցների հատման խաչմերուկի հատվածը, խուլիգանական դրդումներով, դիտավորությամբ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով Իջեւանի բնակիչների եւ երթեւեկության մասնակիցների նկատմամբ, բղավել, հայհոյել են, վնասել նշված խաչմերուկում գտնվող կանգառի թիթեղյա ծածկը, գործադրել բռնություն: Բողոքի ակցիայի մասնակիցների մի մասը քարերի եւ մահակների գործադրմամբ մարմնական վնասվածքներ են պատճառել հասարակական կարգի ապահովման նպատակով հիշյալ վայրում ծառայություն իրականացնող, իշխանության ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանության մի շարք աշխատակիցների եւ չենթարկվելով վերը նշված հանցավոր գործողությունները դադարեցնելու նրանց օրինական պահանջին՝ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ, իրենց ծառայողական պարտականությունները կատարելու հետ կապված, գործադրել են ինչպես կյանքի եւ առողջության համար ոչ վտանգավոր, այնպես էլ վտանգավոր բռնություն: Հարուցվել էր քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, 316-րդ հոդվածի 1-ին մասով եւ 316-րդ հոդվածի 2-րդ մասով: Մի խումբ անձանց կողմից որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ խուլիգանություն կատարելու կասկածանքով ձերբակալվել էր 13 անձ, եւս 6 անձի նկատմամբ որպես խափանման միջոց էր ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին: 2020թ. հոկտեմբերի 28-ից Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանում ընթանում է թվով 20 անձանց դատավարությունը, որոնք այժմ մեղադրվում են ՀՀ քրեական օրենսգրքի 316 հոդվածի 1-ին մասով («Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավոր ազգականի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ»): Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը եվ գրավը: Եթե վերոհիշյալ անձանց կողմից խուլիգանություն չի եղել, ինչու՞ ՀՀ քննչական կոմիտեն հայտարարություն էր տարածել այդ մասին, իշխանության ներկայացուցչի կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնությունը հետո ո՞նց դարձավ ոչ վտանգավոր բռնություն: Այս գործով դատն ավելի քան 3 տարի ձգձգում են, դատական վերջին նիստը կայացել է դեկտեմբերի 6-ին, հաջորդ նիստը նշանակված է 2024թ. հունվարի 24-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ

ԱՐՑԱԽԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կառավարության Հումանիտար կենտրոնում ներկայացրել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց կրթությանը վերաբերող աջակցության ծրագրերի իրականացման ընթացքը:

Ներկայացնելով ուսուցիչների աջակցության ծրագիրը՝ Արաքսիա Սվաջյանը նշել է, որ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների համար գործարկվել է հարթակ, որտեղ ներկայացված են ՀՀ հանրակրթական դպրոցներում առկա թափուր տեղերը:

«Բռնի տեղահանված մեր հայրենակիցները կարող են ընտրել իրենց բնակության վայրում հարմար դպրոց, արտամրցութային կարգով անցնել աշխատանքի եւ ունենալ 30 տոկոս հավելավճար: Իսկ որոշ մարզերի, մասնավորապես՝ Սյունիքի եւ Վայոց ձորի բոլոր դպրոցներում, իսկ Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերի որոշ համայնքների ուսհաստատություններում ունենալ եւս 50 հազար դրամ հավելավճար: Այս պահի դրությամբ 200 ուսուցիչ դիմել է գործուղման կարգով աշխատելու համար. նրանցից 12-ը հրաժարվել է, ինչը պայմանավորված է բնակության վայրի փոփոխությամբ: 188 ուսուցիչ արդեն իսկ աշխատում է հանրակրթական դպրոցներում», - տեղեկացրել է նախարարի տեղակալը:

Արաքսիա Սվաջյանի խոսքով՝ առաջիկայում այդ ուսուցիչները Համաշխարհային բանկի աջակցությամբ կվերապատրաստվեն, որպեսզի պատրաստ լինեն Հանրակրթության պետական նոր չափորոշչով դասավանդելուն: Նախարարի տեղակալի տեղեկացմամբ՝ արդեն կազմվել են խմբերը եւ ժամանակացույցը, եւ մինչեւ դեկտեմբերի վերջ կիրականացվի վերապատրաստման դասընթացը:

Ինչ վերաբերում է Երեւանում աշխատանք փնտրող ուսուցիչներին, ապա Արաքսիա Սվաջյանը նշել է, որ նրանք աշխատանքի կարող են անցնել ընդհանուր ընթացակարգով՝ մասնակցելով մրցույթի:

Անդրադառնալով քոլեջներում, ուսումնարաններում եւ բուհերում կրթությունը շարունակող ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողների ուսման վարձերի փոխհատուցման ծրագրերին՝ Արաքսիա Սվաջյանը տեղեկացրել է, որ, այս պահի տվյալներով, նախնական եւ միջին մասնագիտական ուսհաստատություններում սովորում է 1231, իսկ բուհերում՝ 1844 ուսանող: «Այս ուսանողների ուսման վարձի փոխհատուցումն իրականացվում է կրթաթոշակի տեսքով: Ցանկանում եմ ընդգծել, որ առաջիկա օրերին կառավարության կողմից կհաստատվի որոշում, որը թույլ կտա մինչեւ սեպտեմբերի 19-ը ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցման մեխանիզմներ եւս ներդնել: Այդ ուսանողները երկու հիմնական խմբի են բաժանվում. մի խումբն այն ուսանողներն են, որոնց ուսման վարձը փոխհատուցում էր ԼՂ կառավարությունը, իսկ երկրորդ խմբի ուսանողների ուսման վարձը վճարել են նրանց ընտանիքները, որոնք հայտնվել են ֆինանսական դժվար իրավիճակում: Նոր որոշման ընդունման պարագայում կկարողանանք փոխհատուցել նաեւ նրանց ուսման վարձը»,- ամփոփել է Արաքսիա Սվաջյանը:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ՎԱՏԻԿԱՆՆ ՈՒ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Իրանը կարծում է, որ Սուրբ Աթոռը կարող է ճնշանակալից դեր խաղալ Գազայի հատվածում ճգնաժամի կարգավորման գործում: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Tasnim գործակալությունը հաղորդում է, որ այս մասին Իրանի արտգործնախարար Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը հայտնել է Վատիկանի պետքարտուղար Պիետրո Պարոլինին: Կողմերի հանդիպումը տեղի է ունեցել Ժնեւում ընթացող Փախստականների համաշխարհային ֆորումի շրջանակներում:

Ողջունելով Սուրբ Աթոռի դիրքորոշումը՝ ի պաշտպանություն Պաղեստինի՝ Ամիր Աբդոլլահիանն ասել է, որ Գազայում կատարվողը «ցեղասպանություն է, որն աշխարհն այլեւս չի կարող հանդուրժել»:

Իրանի արտգործնախարարը նշել է, որ Թեհրանը պաղեստինյան «ՀԱՄԱՍ» արմատական շարժումը համարում է ազատության ձգտող շարժում, որը «պայքարում է իսրայելական օկուպացիայի դեմ», սակայն նա միեւնույն ժամանակ հավելել է, որ Թեհրանը կողմնակից չէ տարածաշրջանում պատերազմի ընդլայնմանը:

Իր հերթին Պարոլինը մտահոգություն է հայտնել Պաղեստինի ստատուս-քվոյի առնչությամբ՝ ասելով, որ Սուրբ Աթոռն աջակցում է Գազայում հրադադար ապահովելու ջանքերին: Պարոլինի խոսքով՝ Վատիկանը պնդում է, որ պաղեստինցիներին հումանիտար օգնություն մատակարարվի, իսկ ճգնաժամը լուծվի քաղաքական ճանապարհով:

Իսրայելը պաղեստինյան «ՀԱՄԱՍ» արմատական կազմակերպությանը պատերազմ է հայտարարել հոկտեմբերի 7-ին խմբավորման զինյալների ներխուժումից հետո, որի հետեւանքով Իսրայելում 1200 մարդ է զոհվել, 240 մարդ՝ գերեվարվել: Իսրայելը մերժել է զինադադարի բոլոր կոչերը, չնայած համաձայնել էր 7-օրյա հումանիտար հրադադարի, որի ընթացքում Գազայում պահվող շուրջ 100 գերի փոխանակվեց Իսրայելում բանտարկված 240 պաղեստինցիների հետ:

Իսրայելական հարվածներից Գազայի հատվածում պաղեստինցիների շրջանում զոհերի թիվը գերազանցել է 18 400-ը, շուրջ 50 000 մարդ վիրավորվել է: Գազայի հատվածի բնակչության 85 %-ը տեղահանվել է: Պաղեստինի առողջապահության նախարարության տվյալներով՝ ավելի քան 360 000 մարդ հիվանդ է վարակիչ հիվանդություններով:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 7 ճՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՏԿԱՑՈՒՄ

ՍՈՒԲՎԵՆՑԻԱ՝ ՄԵՂՐԻՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքը 2023 թվականի համար ներկայացրել է ՀՀ կառավարություն-համայնք համաներդրմամբ իրականացվող երկու սուբվենցիոն ծրագիր՝ յուրաքանչյուրը երկու ենթաբաղադրիչով. տեղեկացնում է ՏԿԵ նախարարությունը: Դրանց ընդհանուր արժեքը 213 մլն 168 հազար դրամ է, որում ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափը՝ 150 մլն 644 հազար դրամ:

Մեղրի համայնքում իրականացվող ծրագրերն են՝

- Լեհվազ գյուղական բնակավայրի կենտրոնական փողոցի ասֆալտապատում. ծրագրի ընդհանուր արժեքը՝22 մլն 167 հազար դրամ, որի մեջ ՀՀ կառավարության համաներդրումը 55 տոկոս է, համայնքինը՝45 տոկոս:
- Վարդանիձոր բնակավայրում Վանք-Կալեր անավարտ կամրջի վերանորոգում. ծրագրի ընդհանուր արժեքը՝65 մլն դրամ, որի մեջ ՀՀ կառավարության համաներդրումը 55 տոկոս է, համայնքինը՝ 45 տոկոս:
- Ալվանք գյուղական բնակավայրում նախակրթարանի վերակառուցում. ծրագրի ընդհանուր արժեքը 24 մլն դրամ է, որի մեջ ՀՀ կառավարության համաներդրման չափը՝ 19 մլն 203 հազար դրամ:
- Մեղրի համայնքի մեկ այլ կարեւոր ծրագրով նախատեսվում է նոր մանկապարտեզի հիմնում Հայաստանի ամենածայր հարավում գտնվող սահմանամերձ Նռնաձոր գյուղական բնակավայրում. ծրագրի ընդհանուր արժեքը 102 մլն 470 հազար դրամ է, որի մեջ ՀՀ կառավարության համաներդրման չափը՝ 82 մլն դրամ:

Լեհվազի ճանապարհի եւ Վանք-Կալեր կամրջի շինաշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են, Ալվանքի մանկապարտեզի վերակառուցումն ավարտվել է 95 տոկոսով եւ ընթացքի մեջ է, իսկ Նռնաձորի մանկապարտեզի սուբվենցիոն ծրագիրը գտնվում է մրցութային փուլում:

Նշենք, որ 2023 թվականին բացվեց նաեւ նախորդ տարիներից մեկնարկած սուբվենցիոն ծրագրի շրջանակում հիմնանորոգված Մեղրիի մանկապարտեզը: Հավելենք, որ ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 323,8 մլն դրամ, որի 60%-ը հատկացվել էր ՀՀ պետական բյուջեից. այն 240 երեխա ընդունելու հնարավորություն ունի:

IDBank–Ի ՎԱՐԿԱՆԻՇԸ

Moody's հեղինակավոր միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրել է IDBank-ի՝ ազգային արժույթով եւ արտարժույթով երկարաժամկետ բանկային ավանդների վարկանիշը՝ B2-ից B1՝ կայուն հեռանկարով:

Միաժամանակ Moody's-ը բարձրացրել է վարկարժանության հիմնական գնահատականը (BCA)՝ b2-ից մինչեւ b1, բարձրացրել է բանկի՝ երկարաժամկետ ազգային արժույթով եւ արտարժույթով կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշը (CRRs)՝ B1-ից մինչեւ Ba3, ինչպես նաեւ բարձրացրել է կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ գնահատումը (CR գնահատական) B1(cr)-ից մինչեւ Ba3(cr):

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» Գ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ԵՊՀ-Ի ՀԵՏ

«Կոնվերս բանկ» ընկերության գլխավոր գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Անդրանիկ Գրիգորյանը եւ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանն երեկ ստորագրել են համագործակցության համաձայնագիր՝ միավորելու երկու կառույցների ջանքերը ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստման, կրթական, գիտահետազոտական աշխատանքներ եւ համատեղ այլ ծրագրեր իրականացնելու համար:

Սահմանված նպատակներին հասնելու համար օգտագործվելու են ԵՊՀ ուսումնամեթոդական բազաները, լաբորատորիաները, ինչպես նաեւ «Կոնվերս բանկ»-ի ու Մայր բուհի մարդկային ռեսուրսները, մասնագիտական գիտելիքները, ունակություններն ու հմտությունները:

Անդրանիկ Գրիգորյանն իր խոսքում նշել է միջազգային չափորոշիչներին համապատասխան, մրցունակ կրթության կարեւորությունը. «Այսօրվա ուսանողները վաղը համալրելու են տարբեր ոլորտների կառույցների, այդ թվում՝ բանկերի աշխատակիցների շարքերը: Մենք՝ որպես պատասխանատու բիզնես, կարեւորում ենք մասնակցությունը ֆինանսական համակարգի մասնագետների պատրաստման գործում եւ պատրաստ ենք աջակցել ինչպես մեր փորձառությամբ, այնպես էլ տարբեր համատեղ նախագծերի իրականացման միջոցով»:

ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի խոսքով՝ կրթության զարգացման երաշխիքներից մեկը կապն է աշխատաշուկայի հետ. «Համալսարանի տրամադրած գիտելիքը պետք է իր արդյունավետ կիրառությունը գտնի աշխատանքում: Այս համագործակցությամբ մենք կկարողանանք հասկանալ ու ձեւակերպել արդի միտումները, վերանայել մեր կրթական ծրագրերն ու քայլել ժամանակի պահանջներին համընթաց»:

Բուհ-մասնավոր ընկերություն կապն ամրապնդելու եւ զարգացնելու համար կազմակերպվելու են գիտաժողովներ, կլոր սեղան-քննարկումներ, այդ թվում՝ միջազգային, միմյանց են ներկայացվելու կատարված հետազոտությունների արդյունքները:

Հաստատված գործակցության շրջանակում ԵՊՀ ուսանողները հնարավորություն են ունենալու իրենց մասնագիտական պրակտիկան անցնելու «Կոնվերս բանկ»-ում: ԵՊՀ-ն բանկի աշխատակիցների համար կազմակերպելու է կարճաժամկետ դասընթացներ, ինչպես նաեւ ապահովելու է նրանց մասնակցությունն ամբիոնի բակալավրի եւ մագիստրոսի կրթական ծրագրերի առանձին դասընթացներին:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱԶԱՏՎԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

Երեւանի քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը հայտարարություն է տարածել՝ տեղեկացնելով, որ «Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ում աշխատակիցներ (վարորդներ) են ազատվել աշխատանքից:

««Երեւանի ավտոբուս» ՓԲԸ-ում նույնպես աշխատակիցներ (վարորդներ) են ազատվել աշխատանքից:

Մասնավորապես՝ սեպտեմբերի 1-ից մինչեւ դեկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում քաղաքացիների հետ ոչ պատշաճ վերաբերմունքի, երթեւեկության ընթացքում թույլ տված պարբերական խախտումների, ինչպես նաեւ ծառայողական այլ խնդիրների պատճառով 31 վարորդ ազատվել է աշխատանքից»,- ասված է հաղորդագրության մեջ:

Հիշեցնենք՝Երեւանի համար 94 մանկապարտեզում երեխային բռնության ենթարկելու համար աշխատանքից հեռացվել է 3 աշխատակից: Ձայնագրությունն էր տարածվել համացանցում, որում դաստիարակը ծաղրում ու վիրավորում է երեխային: Մանկապարտեզում ժողով էր անցկացվել, որին մասնակցել էր նաեւ մեր նկարահանող խումբը, լսել արդեն նախկին տնօրենի պաշտոնակատարին:

Ավելի վաղ Երեւանի քաղաքապետարանը նաեւ տեղեկացրել էր, որ ՀՀ ԱԱԾ աշխատակիցների՝նախադպրոցական ուսումնական հաստատություններում իրականացված գործողությունների արդյունքում 11 մանկապարտեզների տնօրեններ ազատվել են աշխատանքից:

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵ՞Լ Է

2018 թվականի մայիսի 8-ին ՀՀ նորանշանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հանրապետության հրապարակում հանդես եկավ ելույթով՝ խոստանալով. «Հայաստանում հեղափոխական տեմպերով պետք է զարգացնել գյուղատնտեսությունը: Նոր տեխնոլոգիաների կիրառումը պետք է լայնորեն տարածվի նաեւ գյուղատնտեսության ոլորտում՝ այս պարագայում էլ որպես ռազմավարական նպատակ ունենալով չմշակվող գյուղատնտեսական հողերի թվի շեշտակի նվազումը եւ, ի վերջո, այդպիսի հողերի գոյության բացառումը»:

Իրականում Հայաստանում գյուղատնտեսությունն անկում է ապրում: Արդեն մի քանի տարի է՝տնտեսական աճի պատկերում այս ոլորտի դիմաց տոկոսը 0-ից ցածր է:

Ինչ վերաբերում է «չմշակվող գյուղատնտեսական հողերի գոյության բացառմանը», նույն Նիկոլ Փաշինյանը 2021 թվականի ապրիլի 28-ին արձանագրեց, որ Հայաստանում վարելահողերի 50%-ից ավելին չի մշակվում, իսկ 74%-ը չի ոռոգվում:

Ասել է թե՝ Նիկոլ Փաշինյանը խաբել է ՀՀ քաղաքացիներին:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑ

«ՓՅՈՒՆԻԿ»-Ն ՈՒ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երեւանի «Փյունիկ» ֆուտբոլային ակումբի ակադեմիայի 34 թիմ եւ երկու գլխավոր թիմեր չեն հայտավորվի հաջորդ տարվա Հայաստանի ֆուտբոլի առաջնություններին, եթե Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավար կազմը վերընտրվի:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ նման հայտարարություն արեց «Փյունիկ» ակումբի նախագահ Արթուր Սողոմոնյանը:

Վերջինս լրագրողների հետ հանդիպման ժամանակ ամփոփեց Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի վերջին 4 տարվա գործունեությունը՝ շեշտելով, որ վերջին տարիներին հայկական ֆուտբոլից հեռացել են բազմաթիվ ներդրողներ, ֆեդերացիան աշխատանքներ չի տանում մանկապատանեկան մասսայական ֆուտբոլը զարգացնելու ուղղությամբ, պատանեկան առաջնություններում գրանցված արդյունքները ենթադրել են տալիս, որ այդ տարիքային խմբերում մրցակցության բացակայություն կա: Ըստ Սողոմոնյանի՝ առկա խնդիրներից են նաեւ պատանեկան թիմերում որակավորված մարզիչների բացակայությունը, երիտասարդական հավաքականի անհաջող ելույթների շարքը Եվրոպայի առաջնության ընտրական փուլում եւ այլն:

«Նախորդ տարիների ընթացքում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան մի շարք կազմակերպություններից ստացել է մոտ 70 միլիոն եվրո: Ես չգիտեմ, թե որտեղ են ծախսվել այդ գումարները: Եթե Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնում վերընտրվի Արմեն Մելիքբեկյանը, եւ փոփոխություն չլինի, «Փյունիկ»-ը կդադարի մասնակցել Հայաստանի առաջնությանը»,-ասաց Սողոմոնյանը:

Վերջինս կոչով դիմեց ՀՖՖ նախագահի ընտրությանը մասնակից գործկոմի անդամներին՝ ընդգծելով, որ ընտրվում է ոչ միայն ֆեդերացիայի նախագահ, այլեւ ընտրում են երկրի ֆուտբոլի ապագան:

Երեւանի «Փյունիկ»-ի գլխավոր մարզիչ Եղիշե Մելիքյանն իր խոսքում շեշտեց, որ ՀՖՖ-ն վախի մթնոլորտ է ստեղծել, եւ ֆեդերացիային կոչ արեց առավել թափանցիկ գործել:

Նա Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությանը հորդորեց ցույց տալ 4 տարվա ընթացքում կատարված աշխատանքը, որը նրանց իրավունք կտա շարունակել ֆեդերացիայի ղեկավարումը:

«Փյունիկ»-ը դեկտեմբերի 23-ին կայանալիք ՀՖՖ նախագահի ընտրություններում կքվեարկի Արաս Օզբիլիզի օգտին:

ԱՆՈՒՆՆԵՐ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության 2023 թվականի «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթին մասնակցող մարզիկների անվանացանկը:

«Ժողովուրդ» օրաթերթի հաղորդմամբ՝ «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթին մասնակցում են հետեւյալ մարզիկները՝

Արթուր Ալեքսանյան-2023 թ.՝հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր,

Արման Աղաջանյան-2023 թ.՝ սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր,

Մալխաս Ամոյան -2023թ.՝հունահռոմեական ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Արման Անդրեասյան-2023թ.՝ազատ ոճի ըմբշամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Արման Ավանեսյան-2023թ.՝ սամբոյի մեծահասակների Եվրոպայի առաջնության չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Հովհաննես Բաչկով -2023 թ.՝ բռնցքամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Դավիթ Գրիգորյան-2023 թ.՝սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր,

Վահրամ Գրիգորյան-2023 թ.՝ սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր,

Վարսիկ Գրիգորյան-2023 թ.՝ սամբոյի մեծահասակների Եվրոպայի առաջնության արծաթե, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Արթուր Դավթյան-2023 թ.՝ սպորտային մարմնամարզության Եվրոպայի առաջնության ոսկե եւ բրոնզե մեդալակիր,

Վազգեն Թեւանյան-2023 թ.՝ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Վարազդատ Լալայան-2023 թ.՝ ծանրամարտի Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների արծաթե մեդալակիր,

Արսեն Հարությունյան-2023 թ.՝ ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Նարեկ Մանասյան-2023 թ.՝ բռնցքամարտի աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Բորիս Շատվերյան-2023 թ.՝սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության արծաթե, Եվրոպայի առաջնության բրոնզե մեդալակիր,

Վահագն Չալյան-2023 թ.՝ սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Ավետիք Պողոսյան-2023 թ.՝սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության արծաթե մեդալակիր,

Գոռ Սահակյան-2023 թ.՝ ծանրամարտի մեծահասակների Եվրոպայի առաջնության չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Սարգիս Վարդանյան-2023 թ.՝ սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր,

Վաչիկ Վարդանյան-2023 թ.՝ սամբոյի մեծահասակների աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր:

Ցանկից ՀՀ հավաքականների գլխավոր մարզիչներն ու նախարարությունում հավատարմագրված մարզական լրագրողները կատարելու են տարվա 10 լավագույն մարզիկների ընտրությունը: Նրանք իրականացնելու են բաց քվեարկություն՝ մրցույթի մասնակիցներից առավելագույնը 10 մարզիկների հերթական (անհատական) համարների նշումով եւ լավագույն տասնյակի հերթականության դասավորմամբ:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱԿԱՌԵԿՈՐԴ Է ԳՐԱՆՑԵԼ

«Մանչեսթեր Յունայթեդը» հակառեկորդ է գրանցել Չեմպիոնների լիգայում:

Հոլանդացի Էրիկ տեն Հագի գլխավորած թիմը դարձավ առաջին անգլիական ակումբը, որը Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում բաց թողեց 15 գոլ. հաղորդում է Opta-ն:

«Մանչեսթեր Յունայթեդը» Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիային» պարտվեց 3:4 եւ 0:1 հաշվով, թուրքական «Գալաթասարային» պարտվեց 2:3 հաշվով, նաեւ 3:3 հաշվով ոչ-ոքի խաղաց ստամբուլյան թիմի հետ, դանիական «Կոպենհագենին» պարտվեց 3:4 հաշվով, հաղթեց 1:0 հաշվով:

A խմբից Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ դուրս եկան «Բավարիան» ու «Կոպենհագենը», Եվրոպայի լիգայի 1/16 եզրափակիչ՝ «Գալաթասարայը»: «Մանչեսթեր Յունայթեդը» գրավեց վերջին տեղը:

ՉԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ֆուտբոլի Չեմպիոնների լիգայում կայացել են խմբային 6-րդ տուրի հանդիպումները:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ պայքարի մեջ մտան A, B, C, D խմբերի թիմերը:

A խմբում «Մանչեսթեր Յունայթեդ»-ը նվազագույն հաշվով զիջեց «Բավարիա»-ին եւ դուրս մնաց հետագա պայքարից: Նույն խմբում «Կոպենհագեն»-ը նույն հաշվով հաղթեց «Գալաթասարայ»-ին:

B խմբում «ՊՍՎ»-«Արսենալ» հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի՝ 1:1 հաշվով: «Լանս»-ը տանը հաղթեց «Սեւիլիա»-ին 2:1 հաշվով:

C խմբում «Ունիոն Բեռլին»-ը 2:3 հաշվով պարտվեց Մադրիդ «Ռեալ»-ին, «Նապոլի»-ն երկու անպատասխան գնդակ ուղարկեց «Բրագա»-ի դարպասը:

Եվ D խմբում «Ինտեր»-«Ռեալ Սոսիեդադ» խաղում դարպասի գրավում չարձանագրվեց՝0:0, իսկ «Բենֆիկա»-ն արտագնա խաղում հաղթեց «Զալցբուրգ»-ին 1:3 հաշվով:

ՍՊԵՐՑՅԱՆԻ ԱՐԺԵՔԸ

Հայաստանի հավաքականի եւ ռուսական «Կրասնոդարի» 23-ամյա կիսապաշտպան Էդուարդ Սպերցյանի տրանսֆերային արժեքն աճել է 3 միլիոն եվրո եւ կազմում է 18 միլիոն եվրո. հաղորդում է Transfermarkt-ը:

Ռուսաստանի Պրեմիեր լիգայի առաջնությունում հանդես եկող ֆուտբոլիստներից Էդուարդ Սպերցյանն ունեցել է տրանսֆերային արժեքի ամենամեծ աճը:

«Կրասնոդարը» Ռուսաստանի առաջնության 18 խաղում վաստակել է 38 միավոր եւ գլխավորում է մրցաշարային աղյուսակը:

● Դեկտեմբերի 16-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Սիրո մենյու» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է կատարվում ջրի ճղատակային օգտագործումը:

Հերիքնազ Մեջլումյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջուրը պետք է վերցվի եւ օգտագործվի միայն ջրօգտագործման թույլտվության մեջ նշված նպատակներով եւ չպետք է գերազանցի արդյունավետ օգտագործման համար Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի հիմնավորած եւ սահմանած չափաքանակները: Ջրային համակարգերի օգտագործումը պետք է ապահովի արդյունավետ ջրօգտագործումը: Ջրօգտագործման եւ էկոլոգիական թողքի փաստացի չափաքանակները հաշվառելու համար Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի կողմից, սույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն, ջրօգտագործման թույլտվության մեջ ամրագրվում է տվյալների առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր տեղադրելու պահանջը (բացառությամբ կրկնակի (երկրորդային) ջրօգտագործման դեպքի):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Ջրօգտագործողի կողմից այդ սարքերի տեղադրման ժամկետները նշվում են Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմնի կողմից ջրօգտագործողին տրամադրվող ջրօգտագործման թույլտվության՝ որպես ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս համարվող պայմաններում:

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունների ճանաչումները:

Էրիկ Սաղաթելյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների միջեւ ամուսնությունները եւ Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջեւ ամուսնությունները, որոնք կնքվել են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս՝ պահպանելով այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում: Օտարերկրյա քաղաքացիների միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կնքված ամուսնությունները, եթե պահպանվել է այն պետության օրենսդրությունը, որի տարածքում դրանք կնքվել են, Հայաստանի Հանրապետությունում վավեր են հյուպատոսական օրինականացման առկայության դեպքում:

ՀՀ առողջապահության նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքական անդամ, Եվրոպայի չեմպիոն Գարիկ Կարապետյանը Կատարի մայրաքաղաք Դոհայում ավարտին մոտեցող ծանրամարտի Գրան պրի մրցաշարում երկամարտի 391 կգ արդյունքում դարձել է բրոնզե մեդալակիր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ __________
Ազգանուն՝ __________
Առաքման հասցե՝ __________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ __________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ



Մարզ	Գիշեր / Ցերեկ
Շիրակ	- 2 - 6 / + 2 + 6
Կոտայքի լեռներ	- 2 - 4 / + 1 + 5
Կոտայքի նախալեռներ	0 + 2 / + 7 + 9
Գեղարքունիք	- 2 - 3 / + 3 + 5
Լոռի	- 1 - 3 / + 6 + 9
Տավուշ	0 + 3 / + 8 + 11
Արագածոտնի լեռներ	- 3 - 5 / + 2 + 4
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 5 / + 5 + 9

Մարզ	Գիշեր / Ցերեկ
Արարատ	+ 1 + 3 / + 9 + 11
Արմավիր	+ 2 + 5 / + 8 + 10
Վայոց ձորի լեռներ	0 - 3 / + 2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 / + 9 + 11
Սյունիքի հովիտներ	+ 4 + 6 / + 7 + 10
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 / + 4 + 7
ԼՂՀ	+ 2 + 4 / + 3 + 5
Երեւան	+ 3 + 5 / + 5 + 7

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **13.12.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*